ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱՋԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ N 15

## ԽԱՉԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 Թ_Ի 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

2020թ-ի 1-ին կիսամյակի բյուջեի եկամուտների պլանը կազմում է 17.399,6 ՀՀ դրամ, որից կատարվել է 14.380,87 ՀՀ դրամ կամ կիսամյակի 82,6%-ը: Հիմնականում թերացվել է գույքահարկի, հողի հարկի և հողի վարձավճարների պլանները:

Թերակատարումը բացատրվում է նրանով, որ համայնքում հիմնականում հարկերը գանձվում են բերքահավաքից հետո հոկտեմբեր նոյեմբեր ամիսներին:

2020թ-ի 1-ին կիսամյակի բյուջեի ծախսերի պլանը կազմում է 17.399,6 ՀՀ դրամ, որից կատարվել է 12.288,8 ՀՀ դրամ կամ կիսամյակի 70,6%-ը: Ծախսերի թերակատարումը պայմանավորված է համայնքի կողմից սուբվենցիոն ծրագրով կապիտալ նորոգման ծախսերի կատարման հետ:Առայժմ մրցութային աշխատանքներ կազմակերպման և մրցույթների անցկացման պատճառով:

Քննարկման արդյունքում ավագանին

ՈՐՈՇԵՑ

Համաձայնություն տալ Խաչաղբյուր համայնքի 2020թ-ի 1-ին կիսամյակի բյուջեի կատարողականին:

Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ավագանու անդամները որոշումը հաստատեցին քվեարկությամբ:

ԿՈՂՄ / ԵՐԵՔ ԴԵՄ /ՉԿԱ Ձեռնպահ/ ՉԿԱ

1. ՏԻՐԱՅՐ ԳԱԲՈՅԱՆ
2. ԳԱԳԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
3. ՊԵՏՐՈՍ ԶԱՔԱՐՅԱՆ

Համայնքի ղեկավար Ս. Գալստյան

## ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

### ՈՐՈՇՈՒՄ N 16

### ԽԱՉԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՌՈԳՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ և ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԴՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Խաչաղբյուր h ամայնքի ղեկավարը ներկայացրեց համայնքի ոռոգման ներքին ցանցի վերանորոգման ծրագրին մասնակցելու և ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացում՝ սուբվենցիա ստանալու թույտվության մասին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 25-րդ ենթակետի պահանջներով և նկատի ունենալով, որ համայնքային ֆինասական ներդրումներ կատարելու պայմանով 2020թ. ՀՀ բյուջեից համայնքներին հատկացվելու են նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ».

2020 թ-ին համայնքում ոռոգման ներքին ցանցի վերանորոգման և կառուցման համար նախատեսված գումարը կազմում է 34,992,840 ՀՀ դրամ, որից համայնքի կողմից ներդրումը լինելու է ընդհանուր գումարի 30%-Ը 10497,9 ՀՀ դրամ: Պետ բյուջեից որպես նպատակային հատկացում կազմում է 24495,0 ՀՀ դրամ:

Քննարկման արդյունքում

Համայնքի ավագանին որոշեց՝

1.Համաձայնել համայնքի ղեկավարի առաջարկությանը և թույլատրել ներկայացնելու համայնքի ներքին ոռոգման ցանցի վերանորոգման ծրագիրը:

2. Մարզպետարան ներկայացնել վերանորոգման ֆինասավորման հայտ:

3. Սահմանել,որ ծրագրի ներկայացման համար համայնքի 2020 թ-ի բյուջեով բավարար ֆիասական միջոցներ են նախատեսված ծրագիրը իրականացնելուհամար:

Ըստ որի համյնքի ավագանին համաձայնություն տվեց համայնքի ներքին ոռոգման ցանցի վերանորոգման համար բյուջեից 10497900 (տաս միլիոն չորս հարյուր ինսուն յոթ հազար ինը հարյուր ) ՀՀ դրամ ներդրում կատարել:

Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ավագանու անդամները որոշումը հաստատեցին քվեարկությամբ:

| | | |
|---|---|---|
| ԿՈՂՄ / ԵՐԵՔ | ԴԵՄ /ՉԿԱ | Ձեռնպահ/ ՉԿԱ |

1. ՏԻՐԱՅՐ ԳԱԲՈՅԱՆ
2. ԳԱԳԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
3. ՊԵՏՐՈՍ ԶԱՔԱՐՅԱՆ

Համայնքի ղեկավար Ս. Գալստյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 13

ԽԱՉԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լսեցին Խաչաղբյուր համայնքի միջնակարգ դպրոցի ավարտական դասարանին օգնություն տրամադրելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությունը, և ներկայացրեց շրջանավարտի ծնող Արթուր Վարդանյանի դիմումը դպրոցի ավարտական դասարանին օգնություն տրամադրելու համար:

Քննարկման արդյունքում համայնքի ավագանին

Որոշեց`

Համաձայնություն տալ` համայնքի միջնակարգ դպրոցի շրջանավարտների հուշալբոմների ձեռք բերելու համար բյուջեից հատկացնել 85000 (ութսուն հազար) ՀՀ դրամ , որպես օգնություն հատկացնել դպրոցի շրջանավարտի ծնող Արթուր Վարդանյանի անունով:

Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ավագանու անդամները որոշումը հաստատեցին քվեարկությամբ:

ԿՈՂՄ / ԵՐԵՔ | ԴԵՄ /ՉԿԱ | Ձեռնպահ/ ՉԿԱ

1. ՏԻՐԱՅՐ ԳԱԲՈՅԱՆ
2. ԳԱԳԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
3. ՊԵՏՐՈՍ ՁԱՔԱՐՅԱՆ

Համայնքի ղեկավար Ս. Գալստյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ N 14

## ԽԱՉԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԿԱՊՎԱԾ ԿՈՎԻԴ-19 ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՊԱՇՏՊԱՆԻՉ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

*Հաշվի առնելով հանրապետությունում տիրող [illegible]* հետ թույլատրել համայնքի բյուջեի 4267 հոդվածից 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ տեղափոխել 4266հոդված: Համապատասխան պաշտպանիչ միջոցներ ձեռք բերելու համար (քլոր , դիմակ, սպիրտային լուծույթներ և տրանսպորտային ծախսեր) :

Քննարկման արդյունքում ավագանին

ՈՐՈՇԵՑ

Թույլատրել համայնքի բյուջեում կատարել համապատասխան փոփոխություններ և կազմել համապատասխան բյուջե մարզին ներկայացնելու համար:

Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ավագանու անդամները որոշումը հաստատեցին քվեարկությամբ:

ԿՈՂՄ / ԵՐԵՔ ԴԵՄ /ՉԿԱ Ձեռնպահ/ ՉԿԱ

1. ՏԻՐԱՅՐ ԳԱԲՈՅԱՆ
2. ԳԱԳԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
3. ՊԵՏՐՈՍ ԶԱՔԱՐՅԱՆ

Համայնքի ղեկավար Ս. Գալստյան